# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"14" մայիսի 2012թ №53 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՂՈՒԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՐՈՒՑԵԼՈԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԿԱՐԱՆՏԻՆԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, <<Անասնաբուժության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունիսի 26-ի <<Գյուղատնտեսական կենդանիների կարանտինի սահմանման և չեղյալ հայտարարման կարգը հաստատելու մասին>> N-671 որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Սյունիքի մարզային կենտրոնի 28.04.2012 թվականի N 3236 գրավոր տեղեկատվությունը, **ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ գյուղական համայնքում խոշոր եղջերավոր կենդանիների մոտ արձանագրված բրուցելոզ հիվանդության լիկվիդացման պատճառով ՀՀ Սյունիքի մարզպետի 2009թ փետրվարի 3-ի << ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ գյուղական համայնքում խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելյոզ հիվանդության բռնկումը մեկուսացնելու ու վերացնելու նպատակով կարանտին և կարանտինային սահմանափակումներ սահմանելու մասին>> N 12 Ա որոշմամբ սահմանված կարանտինը հայտարարել չեղյալ:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. մայիսի 14
ք. Կապան